Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Գայանե Հովսեփյան
   Լիլիթ Աբրիամյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Ջրային ռեսուրսների կառավարման վարչության պետ
   Ջրային քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին, Բոնն և Կոմլենզ քաղաքներ՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ից 23-ը

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության այցելուների ծրագրով «Անդրսահմանային ջրերի կառավարման փորձառություն և լավագույն պրակտիկա» թեմայով թեմատիկ այցին մասնակցություն
   Մասնակից երկրներն էին՝
   Հայաստանի Հանրապետություն,
   Վրաստանի Հանրապետություն,
   Ադրբեջանի Հանրապետություն,
   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

1. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   **Այցելեցինք՝**
   - Գերմանիայի ջրային գործընկերություն /German Water Partnership/, կազմակերպություն: Հանդիպում պարոն Բորիս Գրայֆենդերի (Գործադիր տնօրեն), պարոն Թոմաս Բոյթելի, պարոն Ֆիլիպ Թյուրինգի և տիկին Ջուլիա Էգելի հետ: ***Ծանոթացում*** կազմակերպության աշխատանքին, միջազգային ծրագրերին և կազմակերպության դերին՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ֆորումում /EECCA/
   - Բեռլինի ջրային ակտիվիստների ասոցիացիա /water activist association/

***Ծանոթացում*** ասոցիացիայի, ջրային խորհրդի ձևավորման պատմությանը, աշխատանքներին, ասոցիացիային մասնակցության, կապի և ջրի կառավարման ծրագրերին ներգրավվածությանը:

- Բեռլինի ջրամատակարարման և կեղտաջրերի կազմակերպություն /Berliner Wasserbetriebe/
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Կլիմայի փոփոխության, կլիմայի և անվտանգության, ջրային քաղաքականության աշխարհաքաղաքականության վարչություն, հանդիպում Վիկտորիա Ապիթշի հետ

***Ծանոթացում*** Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային քաղաքականությանը ջրային ռեսուրսների համատեղ կառավարման սեկտորում, իրականացված և ընթացիկ միջազգային ծրագրերին՝ կապված անդրսահմանային ջրերի հետ:

- Գերմանիայի զարգացման և կայունության ինստիտուտ /IDOS/, հանդիպում դոկտոր Ինես Դոմբրովսու հետ, ներկայացում անդրսահմանային ջրերի, կոնֆլիկտների, համագործակցության և օգուտների բաշխման փորձառության վերաբերյալ, և քննարկում:
- Բոնի համալսարանի աշխարհագրության ֆակուլտետ, հանդիպում պրոֆեսոր Յուլիան Քլաուսի հետ: Քննարկման թեման՝ հիդրոլոգիական մոդելները որպես ջրային կառավարման և ջուր-մարդ-էկոհամակարգ պրոցեսների հիմք:
- Գերմանիայի զարգացման համագործակցություն /GIZ/, Կլիմայի, շրջակա միջավայրի, ենթակառուցվածքների բաժին: Ներկայացումներ և քննարկում պարոն Դիետեր Ռոտենբերգերի և մյուս գործընկերների հետ, թեման՝ ջրային ռեսուրսների կառավարում, սահմանանց և կլիմայի նկատմաբ զգայուն ջրային կառավարում, լավագույն փորձը և ծրագրերը:
- Գերմանիայի ջրի, կեղտաջրերի և թափոնների Ասոցիացիա /DWA/, Կրթության և միջազգային համագործակցության բաժին, հանդիպում դոկտոր Ֆրիդրիխ Հեթզելի հետ: Քննարկման առարկան՝ DWA-ի աշխատանքը և նախագծերը, ջրի և ռեսուրսների կառավարումը կլիմայի փոփոխության ժամանակ:
- Հիդրոլոգիայի դաշնային ինստիտուտ /BfG/:

  Հանդիպում Ջրային ռեսուրսների և գլոբալ փոփոխության միջազգային կենտրոնի /ICWRGC/ տնօրենի տեղակալ, Հիդրոլոգիայի ցամաքային/գետնամերձ համաշխարհային ցանցի համակարգող, դոկտոր Ստեֆան Դիետրիխի հետ: Ներկայացում ICWRGC աշխատանքը և միջազգային փոխանակության ու համագործակցության ասպեկտները թեմայով:

  Հռենոս գետի պահպանության միջազգային հանձնաժողով

  Հանդիպում և քննարկում հանձնաժողովի գործադիր տնօրեն պարոն Մարկ Դանիել Հեյնցի հետ, Սահմանանց համագործակցություն ջրերի պահպանման համար կենտրոնանալով Հռենոս գետի ավազանի վրա:
- Մոզելում այցելուների կենտրոն, ծանոթացում ձկների միգրացիան ապահովող աստիճանակերպ ձկնանցարանին:

**2. Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպումների ժամանակ Հայաստանի ներկայացուցիչների կողմից ներկայացվեց ջրային ոլորտում Հայաստանի Հանրապետության ձեռքբերումները և կատարված աշխատանքները: Միաժամանակ նշվեց, որ ջրային ոլորտում Հայաստանը տարածաշրջանում առաջնային տեղ է գրավում, քանի որ Ջրային օրենսգրքի, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» և «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հանրապետությունում իրականացվում է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում (ՋՌՀԿ) և ներդրված են ՋՌՀԿ-ի հիմնական գործիքները՝ ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում, ջրային պետական կադաստր, ջրավազանային կառավարման պլաններ: Նշվեց նաև, որ ջրային ոլորտը ներդաշնակեցվել է Եվրամիության օրենսդրությանը և ջրավազանային կառավարման պլանները մշակվում են ԵՄ Ջրային շրջանակային դիրեկտիվի պահանջներին համապատասխան:
Քանի որ հանդիպումը տարածաշրջանային էր, քննարկումների արդյունքում բացահայտվեցին նաև տարածաշրջանային մակարդակով բազմաթիվ նույնատիպ խնդիրներ և դրանց լուծմանն ուղղված քայլերը երկրների կողմից:

3. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում ներկայացվեց նաև, որ նախատեսվում է Հայաստանում կիրառել վաղ սակավաջրության մոդել, ինչը հնարավորություն կընձեռի հասարակությանը, տնտեսվարողներին և գյուղացիներին հունվար ամսից սկսած ամսական կտրվածքով իրազեկելու տվյալ տարվա հնարավոր սակավաջուր լինելու մասին և Հիդրոլոգիայի դաշնային ինստիտուտին Հայաստանի ներկայացուցիչները խնդրեցին առաջարկել մոդելներ՝ վաղ սակավաջրության համար հնարավորինս ճշգրիտ չափումներ իրականացնելու համար: Հիդրոլոգիայի դաշնային ինստիտուտը ողջունեց հնչեցված առաջարկությունը և պատրաստակամություն հայտնեց կազմակերպել պանել-քննարկում՝ այդ հարցում լավագույն լուծումներ առաջարկելու համար, քանի որ նման մոտեցումը նոր էր նաև իրենց համար:

***Գործուղվողներ՝*** ***Գայանե Հովսեփյան***

***Լիլիթ Աբրահամյան***

*28.09.2023թ.*